ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՓԱՐԱՔԱՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Փարաքար համայնք
ՀՀ, Արմավիրի մարզ, գ. Փարաքար, 0231 6-00-42, 060-53-00-42 paraqar.armavir@mta.gov.am

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

19 ՄԱՅԻՍԻ 2022 թվականի N 50 –Ա

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՓԱՐԱՔԱՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2022 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՅԻՍԻ 19-Ի ԱՐՏԱՀԵՐԹ ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 14-րդ հոդվածի 6-րդ մասով. *Փարաքար համայնքի ավագանին որոշում է՝*

1. Հաստատել Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Փարաքար համայնքի ավագանու 2022 թվականի մայիսի 19-ի արտահերթ նիստի օրակարգը համաձայն հավելվածի:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

Կողմ -11 Դեմ -0 Ձեռնպահ -0

ԱՂԵԿՅԱՆ ՌՈՒԲԻԿ

ԱԽՏՈՅԱՆ ԴԱՎԻԹ

ԱՎԱԳՅԱՆ ԼԻԼԻԹ

ԳՅՈՒԼՆԱԶԱՐՅԱՆ ԼՅՈՒԴՎԻԳ

ԵՐԻՑՅԱՆ ԷՄԻՆ

ԻՍՊԻՐՅԱՆ ՄԱՐԻԱՄ

ԽԱՉԱՏՐՅԱՆ ԳԵՎՈՐԳ

ՄԻՆԱՍՅԱՆ ԴԱՎԻԹ

ՄԿՐՏՉՅԱՆ ԿԱՐԵՆ

ՍԱՐԳՍՅԱՆ ՆԵԿՏԱՐ

ՎԱՐԴԱՆՅԱՆ ԱՐԱՔՍՅԱ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ԴԱՎԻԹ ՄԻՆԱՍՅԱՆ

Հավելված
Հայաստանի Հանրապետության
Արմավրի մարզի Փարաքար համայնքի ավագանու
2022 թվականի մայիսի 19 – ի N 50 -Ա որոշման

# Օ Ր Ա Կ Ա Ր Գ

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՓԱՐԱՔԱՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2022 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՅԻՍԻ 11-Ի ԱՐՏԱՀԵՐԹ ՆԻՍՏԻ

1. Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Փարաքար համայնքի գլխավոր հատակագծում փոփոխություն կատարելու և համայնքային սեփականություն հանդիսացող հողամասի նպատակային նշանակությունը փոփոխելու մասին .
Զեկ.՝ Գ.Սարիբեկյան

2. Հողամասի նպատակային նշանակությունը փոփոխելու մասին
Զեկ.՝ Գ.Սարիբեկյան

3. Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Փարաքար համայնքի գլխավոր հատակագծում փոփոխություն կատարելու և Փարաքար համայնքի ավագանու 2020 թվականի հունիսի 23-ի թիվ 22- Ա որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին
Զեկ.՝ Գ.Սարիբեկյան

4. Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Փարաքար համայնքի ավագանու 2022 թվականի ապրիլի 11-ի թիվ 39-Ա որոշմամբ հաստատված հավելվածում փոփոխություն կատարելու մասին
Զեկ.՝ Դ.Մինասյան

5. Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Փարաքար համայնքի անապահով բնակիչներին դրամական օգնություն տրամադրելու մասին
Զեկ. Կ.Արթենյան

6. Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Փարաքար համայնքի անապահով բնակիչներին ուսման վարձավճարի գծով օգնություն տրամադրելու մասին
Զեկ. Կ.Արթենյան

7. Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Փարաքար համայնքի ավագանու 2022 թվականի ապրիլի 11-ի թիվ 35-Ա որոշմամբ հաստատված NN 1 և 3 հավելվածները՝ շարադրել նոր խմբագրությամբ համաձայն NN 1 և 2 հավելվածների:
Զեկ. Գ.Սարիբեկյան

8. Հողամասի գործառնական նշանակությունը փոխելու և ուղղակի վաճառքի միջոցով օտարելու մասին:
Զեկ. Գ.Սարիբեկյան

9. Հողամասն ուղղակի վաճառքի միջոցով օտարելու մասին:
Զեկ. Գ.Սարիբեկյան

10. Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Փարաքար համայնքի ավագանու հերթական նիստի օրվա սահմանում:
Զեկ. Դ.Մինասյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՓԱՐԱՔԱՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Փարաքար համայնք
ՀՀ, Արմավիրի մարզ, գ. Փարաքար, 0231 6-00-42, 060-53-00-42 paraqar.armavir@mta.gov.am

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

19 ՄԱՅԻՍԻ 2022 թվականի N 51 –Ա

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՓԱՐԱՔԱՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԳԼԽԱՎՈՐ ՀԱՏԱԿԱԳԾՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ԵՎ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՀՈՂԱՄԱՍԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՓՈՓՈԽԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 3-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2011 թվականի դեկտեմբերի 29-ի N 1920-Ն որոշմամբ սահմանված կարգով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետի 2021 թվականի հոկտեմբերի 11-ի N 01/14/06053-2021 գրությունը, Հայաստանի Հանրապետության համայնքների քաղաքաշինական ծրագրային փաստաթղթերի մշակման աշխատանքները համակարգող միջգերատեսչական հանձնաժողովի N 1/փ-299 դրական եզրակացությունը, ***Փարաքար համայնքի ավագանին որոշում է.***

1. Տալ համաձայնություն Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Փարաքար համայնքի գլխավոր հատակագծում կատարել փոփոխություն և համայնքային սեփականություն հանդիսացող 04-094-0017-0027 կադաստրային ծածկագրով, 0.0404 հա մակերեսով արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական նպատակային նշանակության հողամասի նպատակային նշանակությունը փոխել որպես բնակավայրերի հող, գործառնական նշանակությունը՝ հասարակական կառուցապատման:

2. Առաջարկել համայնքի ղեկավարին՝ իրականացնել սույն որոշումից բխող գործառույթները:

Կողմ -11 Դեմ -0 Ձեռնպահ -0

ԱՂԵԿՅԱՆ ՌՈՒԲԻԿ

ԱԽՏՈՅԱՆ ԴԱՎԻԹ

ԱՎԱԳՅԱՆ ԼԻԼԻԹ

ԳՅՈՒԼՆԱԶԱՐՅԱՆ ԼՅՈՒԴՎԻԳ

ԵՐԻՑՅԱՆ ԷՄԻՆ

ԽՍՊԻՐՅԱՆ ՄԱՐԻԱՄ

ԽԱՉԱՏՐՅԱՆ ԳԵՎՈՐԳ

ՄԻՆԱՍՅԱՆ ԴԱՎԻԹ

ՄԿՐՏՉՅԱՆ ԿԱՐԵՆ

ՍԱՐԴԱՐՅԱՆ ՆԵԿՏԱՐ

ՎԱՐԴԱՆՅԱՆ ԱՐԱՔՍՅԱ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԴԱՎԻԹ ՄԻՆԱՍՅԱՆ

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՓԱՐԱՔԱՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Փարաքար համայնք
ՀՀ, Արմավիրի մարզ, գ. Փարաքար, 0231 6-00-42, 060-53-00-42 paraqar.armavir@mta.gov.am

## Ո Ր Ո Շ Ո Ւ Մ
19 ՄԱՅԻՍԻ 2022 թվականի N 52 –Ա

### ՀՈՂԱՄԱՍԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՓՈՓՈԽԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 3-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով, 7-րդ հոդվածի 9-րդ մասով և հիմք ընդունելով 2022 թվականի մարտի 23-ին տրված N 82 ճարտարապետահատակագծային առաջադրանքը և սեփականատեր Աննա Գևորգի Հարությունյանի 2022 թվականի ապրիլի 25-ի դիմումը. ***Փարաքար համայնքի ավագանին որոշում է՝***

1. Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Փարաքար համայնքի Պտղունք գյուղի վարչական սահմաններում գտնվող՝ Աննա Գևորգի Հարությունյանին սեփականության իրավունքով պատկանող 04-082-0306-0011 կադաստրային ծածկագրով 0.43 հա մակերեսով գյուղատնտեսական նպատակային նշանակության հողամասի (գործառնական նշանակությունը 3-րդ կարգի կորիզավոր) նպատակային նշանակությունը փոփոխել որպես արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական նպատակային նշանակության հող, գործառնական նշանակությունը՝ գյուղատնտեսական արտադրական օբյեկտների՝ գյուղատնտեսական արտադրանք վերամշակող տնտեսություն և անասնաշենք կառուցելու համար:

2.Հանձնարարել համայնքի ղեկավարին կատարելու սույն որոշումից բխող գործառույթները:

Կողմ -11 Դեմ -0 Ձեռնպահ -0

ԱՂԵԿՅԱՆ ՌՈՒԲԻԿ
ԱԽՏՈՅԱՆ ԴԱՎԻԹ
ԱՎԱԳՅԱՆ ԼԻԼԻԹ
ԳՅՈՒԼՆԱԶԱՐՅԱՆ ԼՅՈՒԴՎԻԳ
ԵՐԻՑՅԱՆ ԷՄԻՆ
ԻՍՊԻՐՅԱՆ ՄԱՐԻԱՄ
ԽԱՉԱՏՐՅԱՆ ԳԵՎՈՐԳ
ՄԻՆԱՍՅԱՆ ԴԱՎԻԹ
ՄԿՐՏՉՅԱՆ ԿԱՐԵՆ
ՍԱՐԴԱՐՅԱՆ ՆԵՎՍՏԱՐ
ՎԱՐԴԱՆՅԱՆ ԱՐՍԻՔՅԱ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ԴԱՎԻԹ ՄԻՆԱՍՅԱՆ

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՓԱՐԱՔԱՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Փարաքար համայնք
ՀՀ, Արմավիրի մարզ, գ. Փարաքար, 0231 6-00-42, 060-53-00-42 paraqar.armavir@mta.gov.am

### Ո Ր Ո Շ ՈՒ Մ
19 ՄԱՅԻՍԻ 2022 թվականի N 53 –Ա

### ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՓԱՐԱՔԱՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԳԼԽԱՎՈՐ ՀԱՏԱԿԱԳԾՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ԵՎ ՓԱՐԱՔԱՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2020 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆԻՍԻ 23-Ի ԹԻՎ 22-Ա ՈՐՈՇՈՒՄՆ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության «Հողային օրենսգրքի» 3-րդ հոդվածի 1-ին կետով, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 37-րդ հոդվածի առաջին մասով, Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Փարաքար համայնքի ավագանու 2012 թվականի մարտի 28-ի ,,Փարաքար համայնքի (բնակավայրի) պարզեցված գլխավոր հատակագիծը հաստատելու մասին,, N 15-Ն որոշմամբ և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կադաստրի կոմիտեի գույքի իրավունքի պետական գրանցման վարույթը կասեցնելու մասին 2022 թվականի ապրիլի 1-ի թիվ Կ-01042022-04-0077 որոշումը. ***Փարաքար համայնքի ավագանին որոշում է՝***

1. Փարաքար համայնքի գլխավոր հատակագծում կատարել հետևյալ փոփոխությունը.
1) Փարաքար համայնքի վարչական սահմաններում գտնվող 04-094-0017-0002 կադաստրային ծածկագրով 0.2216 հա պետական սեփականություն հանդիսացող՝ հատուկ նշանակության նպատակային նշանակությամբ հողամասի նպատակային նշանակությունը փոխել, որպես արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական նշանակության հող, գործառնական նշանակությունը արդյունաբերական օբյեկտների:
2. Առաջարկել համայնքի ղեկավարին (Դ.Մինասյան)՝ սահմանված կարգով իրականացնելու սույն որոշումից բխող իրավական գործառույթները:
3. Ուժը կորցրած ճանաչել Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Փարաքար համայնքի ավագանու 2020 թվականի հունիսի 23-ի «Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Փարաքար համայնքի գլխավոր հատակագծում փոփոխություն կատարելու մասին» թիվ 22-Ա որոշումը:

Կողմ -11 Դեմ -0 Ձեռնպահ -0

ԱՂԵԿՅԱՆ ՌՈՒԲԻԿ
ԱԽՏՈՅԱՆ ԴԱՎԻԹ
ԱՎԱԳՅԱՆ ԼԻԼԻԹ
ԳՅՈՒԼՆԱԶԱՐՅԱՆ ԼՅՈՒԴՎԻԳ
ԵՐԻՑՅԱՆ ԷՄԻՆ
ԽՍՊԻՐՅԱՆ ՄԱՐԻԱՄ
ԽԱՉԱՏՐՅԱՆ ԳԵՎՈՐԳ

ՄԻՆԱՍՅԱՆ ԴԱՎԻԹ

ՄԿՐՏՉՅԱՆ ԿԱՐԵՆ

ՄԱՐԴԱՐՅԱՆ ՆԵԿՏԱՐ

ՎԱՐԴԱՆՅԱՆ ԱՐԱՔՍՅԱ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ԴԱՎԻԹ ՄԻՆԱՍՅԱՆ

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՓԱՐԱՔԱՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Փարաքար համայնք
ՀՀ, Արմավիրի մարզ, գ. Փարաքար, 0231 6-00-42, 060-53-00-42 paraqar.armavir@mta.gov.am

### Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

19 ՄԱՅԻՍԻ 2022 թվականի N 54 –Ա

### ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՓԱՐԱՔԱՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2022 ԹՎԱԿԱՆԻ ԱՊՐԻԼԻ 11-Ի ԹԻՎ 39-Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ՀԱՎԵԼՎԱԾՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետով. *Փարաքար համայնքի ավագանին որոշում է*

1. Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Փարաքար համայնքի ավագանու 2022 թվականի ապրիլի 11-ի «*Հայաստանի հանրապետության Արմավիրի մարզի Փարաքար համայնքի կամավոր խնդիրները, կամավոր խնդիրներին ուղղված սեփական լիազորությունները և դրանց իրականացման կարգը հաստատելու մասին*» *թիվ 39-Ա որոշմամբ հաստատված հավելվածում կատարել փոփոխություն՝ 14-րդ կետը շարադրել նոր խմբագրությամբ.* «*14.*Համայնքի բնակչի հուղարկավորության կազմակերպման համար համայնքի ղեկավարը կարող է իր որոշմամբ՝ համապատասխան փաստաթղթերի առկայության դեպքում, հատկացնել դրամական օգնություն՝ 40000 (քառասուն հազար) ՀՀ դրամի չափով, ինչպես նաև հուղարկավորության ժամանակ Փարաքար համայնքի կողմից հատկացնել ծաղկեպսակ՝ 15000 ՀՀ դրամի սահմաններում: Կատարված աշխատանքների մասին ներկայացնել հաղորդում ավագանու առաջիկա նիստին, որն ավագանու կողմից կընդունվի ի գիտություն:»:
2. *Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:*

Կողմ -11 Դեմ -0 Ձեռնպահ -0

ԱՂԵԿՅԱՆ ՌՈՒԲԻԿ
ԱԽՏՈՅԱՆ ԴԱՎԻԹ
ԱՎԱԳՅԱՆ ԼԻԼԻԹ
ԳՅՈՒԼՆԱԶԱՐՅԱՆ ԼՅՈՒԴՎԻԳ
ԵՐԻՑՅԱՆ ԷՄԻՆ
ԻՍՊԻՐՅԱՆ ՄԱՐԻԱՄ

ԽԱՉԱՏՐՅԱՆ ԳԵՎՈՐԳ

ՄԻՆԱՍՅԱՆ ԴԱՎԻԹ

ՄԿՐՏՉՅԱՆ ԿԱՐԵՆ

ՄԱՐԴԱՐՅԱՆ ՆԵԿՏԱՐ

ՎԱՐԴԱՆՅԱՆ ԱՐԱՔՍՅԱ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ԴԱՎԻԹ ՄԻՆԱՍՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՓԱՐԱՔԱՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Փարաքար համայնք
ՀՀ, Արմավիրի մարզ, գ. Փարաքար, 0231 6-00-42, 060-53-00-42 paraqar.armavir@mta.gov.am

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

19 ՄԱՅԻՍԻ 2022 թվականի N 55 –Ա

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՓԱՐԱՔԱՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՆԱՊԱՀՈՎ ԲՆԱԿԻՉՆԵՐԻՆ ԴՐԱՄԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 7 -րդ կետով, Փարաքար համայնքի ավագանու 2022 թվականի ապրիլի 11-ի N 39-Ա որոշմամբ հաստատված կարգի 19-րդ կետով և հիմք ընդունելով Փարաքարի համայնքապետարանի սոցիալական հանձնաժողովի 2022 թվականի մայիսի 4-ի N 1 արձանագրությունը. Փարաքար համայնքի ավագանին որոշում է՝

1.Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Փարաքար համայնքի անապահով բնակիչներին տրամադրել 900 000 (ինը հարյուր հազար) ՀՀ դրամ օգնություն՝ համաձայն հավելվածի:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

Կողմ -11 Դեմ - 0 Ձեռնպահ -0

ԱՂԵԿՅԱՆ ՌՈՒԲԻԿ

ԱԽՏՈՅԱՆ ԴԱՎԻԹ

ԱՎԱԳՅԱՆ ԼԻԼԻԹ

ԳՅՈՒԼՆԱԶԱՐՅԱՆ ԼՅՈՒԴՎԻԳ

ԵՐԻՑՅԱՆ ԷՄԻՆ

ԻՍՊԻՐՅԱՆ ՄԱՐԻԱՄ

ԽԱՉԱՏՐՅԱՆ ԳԵՎՈՐԳ

ՄԻՆԱՍՅԱՆ ԴԱՎԻԹ

ՄԿՐՏՉՅԱՆ ԿԱՐԵՆ

ՍԱՐԴԱՐՅԱՆ ՆԵՏԱՐ

ՎԱՐԴԱՆՅԱՆ ԱՐԱՔՍՅԱ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԴԱՎԻԹ ՄԻՆԱՍՅԱՆ

Հավելված
Հայաստանի Հանրապետության
Արմավրի մարզի Փարաքար համայնքի ավագանու
2022 թվականի մայիսի 19-ի N 55-Ա որոշման

ՑՈՒՑԱԿ
ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ՍՏԱՑՈՂ ԱՆԱՊԱՀՈՎ ԲՆԱԿԻՉՆԵՐԻ

| N | Անուն, ազգանուն | Հասցեն | Ընտանեկան վիճակը | Գումարը |
|---|---|---|---|---|
| 1. | Գևորգյան Մերա | Փարաքար, Է.Թևոսյան փող.1-ին նրբանցք թիվ 21 | միայնակ թոշակառու է, ունի առողջական խնդիրներ, գտնվում է ծանր վիճակում: | 50 000 |
| 2. | Պողոսյան Քրիստինե | Գ. Մուսալեռ | Ընտանիքը բնակվում է վագոն տնակում, մշտական աշխատանք ունեցող չկա ընտանիքում | 50 000 |
| 3. | Դավթյան Գայանե | Գ. Արևաշատ | Որդին՝ Վահագն Դավթյանը ունի սրտի անբավարարվածություն, մասնակցել է 44 օրյա պատերազմին, ընտանիքը բնակվում է չվերանորոգված տանը՝ հագեցած սովետական ժամանակաշրջանին բնորոշ ատրիբուտներով | 50 000 |
| 4. | Երիցյան Ռուզաննա | Փարաքար համայնք, Է. Թևոսյան փ., տուն 7 | Ունի մանկուց հաշմանդամ երեխա, ընտանիքում մշտական աշխատանք ունեցող չկա | 50 000 |
| 5 | Երիցյան Ամալյա | Գ. Թաիրով, շ. 4, բն 7 | Միայնակ ապրող անժառանգ կենսաթոշակառու է, միակ եկամուտը կենսաթոշակն ու սոցիալական նպաստն է | 50 000 |
| 6 | Արզումանյան Ծովակ | Փարաքար, Նաիրիր փ., 2-րդ նրբ, տուն 8 | Բնակվում է չվերանորոգված տանը՝ մինիմալ սոցիալական պայմաններով | 50000 |
| 7 | Արմինդա Մուրադյան | Գ. Թաիրով, Արգիշտի փ., տուն 9 | Բնակվում է մեծամասամբ չվերանորոգված տանը, ամուսինը տարիներ առաջ մահացել է | 30 000 |
| 8 | Մուսաելյան Նատալյա | Գ. Այգեկ, բն. 7/9 | Միայնակ ապրող կին է, տունը վերանորոգված չէ՝ հագեցած սովետական ժամանակաշրջանին բնորոշ կահույքով, գույքով | 50000 |
| 9 | Մալխասյան Անահիտ | Գ. Արևաշատ, Բարեկամության փ., տուն 5 | Միայնակ ապրող կենսաթոշակառու է, ձմռանը տանը կա ջեռուցման խնդիր , տունը վերանորոգված չէ | 50000 |
| 10 | Էկմեկչյան Գոհար | Գ. Արևաշատ | Բնակարանային պայմանները ծայրահեղ ծանր են . չկան մինիմալ պայմաններ մարդու պահանջմունքները բավարարելու համար | 50000 |

| | | | | |
|---|---|---|---|---|
| 11 | Արթինյան Արեգնազ | Գ. Փարաքար, Լուսավորիչ փ., տուն 9 | Գ. Բնակվում են ամուսիններով, երկուսն էլ կենսաթոշակառու են խնամում են թոռներին , հարսը և որդին երեխաների խնամքը թողել են իրենց ուսերին | 30000 |
| 12 | Զաքարյան Զուլետա | Գ. Փարաքար, Կոմիտասի փ., 23/1 տնակ | Բնակվում են չվերանորոգած տանը, որի մեծ մասը վերանորոգած չէ | 30000 |
| 13 | Մալինցյան Անժելա | Գ. Մուսալեռ | Ներկայումս ապրում է ուրիշի տանը, մասնակցել է 44 օրյա պատերազմին, ունի 2 տղա, չունի մշտական բնակության վայր | 50000 |
| 14 | Հակոբյան Վահան | Գ.Մուսալեռ, Անի թաղ. Շ 4, բն 13 | Ունի շաքարային դիաբետ,, ընտանիքը բաղկացած է 3 շնչից, բնակվում են սովետական ժամանակաշրջանին բնորոշ ատրիբուտներով հագեցած տանը | 30000 |
| 15 | Եդոյան Օվսաննա | Գ. Պտղունք, Տերյան փ., տուն 26 | Բնակվում է անչափահաս դստեր հետ, ամուսինը տարիներ առաջ մահացել է | 30000 |
| 16 | Հովիվյան Գայանե | Գ. Մուսալեռ | Միայնակ կենսաթոշակառու է, չունի այլ օգնող, գտնվում է սոցիալապես ծանր վիճակում | 50000 |
| 17 | Մկրտչյան Մուշեղ | գ.Պտղունք | Որդին զոհվել է 44-օրյա պատերազմի ժամանակ, սոցիալապես անապահով ընտանիք է | 50 000 |
| 18 | Գրիգորյան Նազիկ | Գ.Պտղունք | Որդին զոհվել է 44-օրյա պատերազմի ժամանակ, սոցիալապես անապահով ընտանիք է | 50 000 |
| 19 | Հարությունյան Վոլոդյա | Գ. Փարաքար, | Որդին զոհվել է 44-օրյա պատերազմի ժամանակ, շարժական տնակը ձևափոխում են, հարմարեցնում որ բնակվեն | 50 000 |
| 20 | Սարդյան Անահիտ | Գ.Բաղրամյան, Շինարարների 5 | Յոթ շնչից բաղկացած ընտանիք է, ընտանիքում կա մեկ աշխատող, 2 անչափահաս, բնակվում են նյութական վատ պայմաններում | 50 000 |
| | | | Ընդամենը 900 000 /ինը հարյուր հազար/ դրամ | |

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՓԱՐԱՔԱՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Փարաքար համայնք
ՀՀ, Արմավիրի մարզ, գ. Փարաքար, 0231 6-00-42, 060-53-00-42 paraqar.armavir@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ
19 ՄԱՅԻՍԻ 2022 թվականի N 56 –Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՓԱՐԱՔԱՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՆԱՊԱՀՈՎ ԲՆԱԿՉԻ ՈՒՍՄԱՆ ՎԱՐՁԻ ՄԱՍՆԱԿԻ ՀԱՏՈՒՑՄԱՆ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 7 -րդ կետով, Փարաքար համայնքի ավագանու 2022 թվականի ապրիլի 11-ի N 39-Ա որոշմամբ հաստատված կարգի 19-րդ կետով և հիմք ընդունելով Փարաքարի համայնքապետարանի սոցիալական հանձնաժողովի 2022 թվականի մայիս 4 -ի արձանագրությունը, Փարաքար համայնքի ավագանին որոշում է.

1.Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Փարաքար համայնքի Մուսալեռ գյուղի բնակիչ՝ Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանի բակալավրիատի հեռակա ուսուցման երրորդ կուրսի ուսանողուհի Մարիետա Գագիկի Թովմասյանին տրամադրել մասնակի ուսման վարձավճարի հատուցում 100 000 ՀՀ դրամի չափով:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

Կողմ -11 Դեմ - 0 Ձեռնպահ-0

ԱՂԵԿՅԱՆ ՌՈՒԲԻԿ

ԱԽՏՈՅԱՆ ԴԱՎԻԹ

ԱՎԱԳՅԱՆ ԼԻԼԻԹ

ԳՅՈՒԼՆԱԶԱՐՅԱՆ ԼՅՈՒԴՎԻԳ

ԵՐԻՑՅԱՆ ԷՄԻՆ

ԻՍՊԻՐՅԱՆ ՄԱՐԻԱՄ

ԽԱՉԱՏՐՅԱՆ ԳԵՎՈՐԳ

ՄԻՆԱՍՅԱՆ ԴԱՎԻԹ

ՄԿՐՏՉՅԱՆ ԿԱՐԵՆ

ՍԱՐԴԱՐՅԱՆ ՆԵԿՏԱՐ

ՎԱՐԴԱՆՅԱՆ ԱՐԱՔՍՅԱ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ԴԱՎԻԹ ՄԻՆԱՍՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՓԱՐԱՔԱՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Փարաքար համայնք
ՀՀ, Արմավիրի մարզ, գ. Փարաքար, 0231 6-00-42, 060-53-00-42 paraqar.armavir@mta.gov.am

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

19 ՄԱՅԻՍԻ 2022 թվականի N 57 –Ա

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՓԱՐԱՔԱՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2022 ԹՎԱԿԱՆԻ ԱՊՐԻԼԻ 11-Ի ԹԻՎ 35- Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ՀԱՎԵԼՎԱԾԸ ՆՈՐ ԽՄԲԱԳՐՈՒԹՅԱՄԲ ՇԱՐԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ հոդվածով. *Փարաքար համայնքի ավագանին որոշում է՝*

1. Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Փարաքար համայնքի ավագանու 2022 թվականի ապրիլի 11-ի «Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Փարաքար համայնքի համայնքային հիմնարկի, համայնքային ենթակայության ոչ առևտրային կազմակերպությունների կառուցվածքը, աշխատողների քանակը, հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը հաստատելու մասին» *թիվ 35-Ա որոշմամբ հաստատված N 1 հավելվածը շարադրել նոր խմբագրությամբ՝ համաձայն հավելվածի:*
2. *Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:*

Կողմ -11 Դեմ -0 Ձեռնպահ -0

ԱՂԵԿՅԱՆ ՌՈՒԲԻԿ

ԱԽՏՈՅԱՆ ԴԱՎԻԹ

ԱՎԱԳՅԱՆ ԼԻԼԻԹ

ԳՅՈՒԼՆԱԶԱՐՅԱՆ ԼՅՈՒԴՎԻԳ

ԵՐԻՑՅԱՆ ԷՄԻՆ

ԻՍՊԻՐՅԱՆ ՄԱՐԻԱՄ

ԽԱՉԱՏՐՅԱՆ ԳԵՎՈՐԳ

ՄԻՆԱՍՅԱՆ ԴԱՎԻԹ

ՄԿՐՏՉՅԱՆ ԿԱՐԵՆ

ՍԱՐԴԱՐՅԱՆ ՆԵԿՏԱՐ

ՎԱՐԴԱՆՅԱՆ ԱՐԱՔՍՅԱ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԴԱՎԻԹ ՄԻՆԱՍՅԱՆ

Հավելված N 1

Հայաստանի Հանրապետության
Արմավիրի մարզի Փարաքար համայնքի ավագանու
2022 թվականի մայիսի 19-ի N 57 -Ա որոշման

«ՀԱՎԵԼՎԱԾ N 1

Հայաստանի Հանրապետության
Արմավիրի մարզի Փարաքար համայնքի ավագանու
2022 թվականի ապրիլի 11-ի N 35-Ա որոշման

# Հ Ա Ս Տ Ի Ք Ա Ց Ո Ւ Ց Ա Կ

## ՓԱՐԱՔԱՐ ՀԱՄԱՅՆՔԻ «ԲԱՐԵԿԱՐԳՈՒՄ» ՏՆՕՐԻՆՈՒԹՅՈՒՆ

Աշխատողների քանակը -40

հազ.դրամ

| | Հաստիքի անվանումը | Հաստիքային միավորը | Պաշտոնային դրույքաչափ |
|---|---|---|---|
| 1 | Տնօրեն | 1 | 280.0 |
| 2 | Տեղակալ | 1 | 220.0 |
| 3 | Հաշվապահ | 1 | 160.0 |
| 4 | Գործավար-օպերատոր | 1 | 130.0 |
| 5 | Գերեզմանների հսկիչ-բանվոր | 7.5 | 125.0 |
| 6 | Բանվոր | 13 | 120.0 |
| 7 | Հսկիչ-տեսուչ Թաիրով | 1 | 100.0 |
| 8 | Հսկիչ-տեսուչ Փարաքար | 1 | 100.0 |
| 9 | Հսկիչ-տեսուչ իրավաբանական | 1 | 100.0 |
| 10 | Հավաքարար /վարչական շենքի/ | 1 | 120.0 |
| 11 | Հավաքարար /անցումների/ | 1 | 100.0 |
| 12 | Այգեպան -հսկիչ /հուշահամալիրի/ | 1 | 100.0 |
| 13 | Բանվոր /բիոլճակի/ | 4 | 105.0 |
| 14 | Ջրդող | 1 | 150.0 |
| 15 | Այգեպան | 3 | 120.0 |
| 16 | Սանտեխնիկ | 1 | 110.0 |
| | **Ընդամենը** | **39.5** | **2140.0:»** |

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՓԱՐԱՔԱՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Փարաքար համայնք
ՀՀ, Արմավիրի մարզ, գ. Փարաքար, 0231 6-00-42, 060-53-00-42 paraqar.armavir@mta.gov.am

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

19 մայիսի 2022 թվականի N 58 -Ա

## ՀՈՂԱՄԱՍԻ ԳՈՐԾԱՌՆԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՓՈԽԵԼՈՒ ԵՎ ՀՈՂԱՄԱՍՆ ՈՒՂՂԱԿԻ ՎԱՃԱՌՔԻ ՄԻՋՈՑՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2001թվականի ապրիլի 12-ի N 286 և 2016 թվականի մայիսի 26-ի N 550-Ն որոշումներով, *Փարաքար համայնքի ավագանին որոշում է՝*

1. Տալ համաձայնություն Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Փարաքար համայնքի Թաիրով գյուղում Գայանե Ռազմիկի Սաhակյանին սեփականության իրավունքով պատկանող 04-094-0201-0046 կադաստրային ծածկագրով՝ Ֆ.Նանսենի փողոց թիվ 25-27 hասցեում գտնվող բնակավայրի, բնակելի կառուցապատման 0.1212 հա հողամասին կից բնակավայրի, այլ հողեր գործառնական նշանակության 0.00755 հա հողամասի գործառնական նշանակությունը փոխել որպես բնակավայրերի բնակելի կառուցապատման հող և այդ հողամասն ուղղակի վաճառքի միջոցով՝ ընդլայնման նպատակով, օտարել Գայանե Ռազմիկի Սաhակյանին:

2.Վաճառքի գինը սահմանել մեկ քառակուսի մետրի համար 6834.3 ՀՀ դրամ՝ կադաստրային արժեքին համապատասխան:

3.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

Կողմ - 11 Դեմ - 0 Ձեռնպահ -0

ԱՂԵԿՅԱՆ ՌՈՒԲԻԿ

ԱԽՏՈՅԱՆ ԴԱՎԻԹ

ԱՎԱԳՅԱՆ ԼԻԼԻԹ

ԳՅՈՒԼՆԱԶԱՐՅԱՆ ԼՅՈՒԴՎԻԳ

ԵՐԻՑՅԱՆ ԷՄԻՆ

ԽՍՊԻՐՅԱՆ ՄԱՐԻԱՄ

ԽԱՉԱՏՐՅԱՆ ԳԵՎՈՐԳ

ՄԻՆԱՍՅԱՆ ԴԱՎԻԹ

ՄԿՐՏՉՅԱՆ ԿԱՐԵՆ

ՍԱՐԴԱՐՅԱՆ ՆԵԿՏԱՐ

ՎԱՐԴԱՆՅԱՆ ԱՐԱՔՍՅԱ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ԴԱՎԻԹ ՄԻՆԱՍՅԱՆ

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՓԱՐԱՔԱՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Փարաքար համայնք
ՀՀ, Արմավիրի մարզ, գ. Փարաքար, 0231 6-00-42, 060-53-00-42 paraqar.armavir@mta.gov.am

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

19 մայիսի 2022 թվականի N 59 -Ա
ՀՈՂԱՄԱՍ ՈՒՂՂԱԿԻ ՎԱՃԱՌՔԻ ՄԻՋՈՑՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2001թվականի ապրիլի 12-ի N 286 և 2016 թվականի մայիսի 26-ի N 550-Ն որոշումներով. ***Փարաքար համայնքի ավագանին որոշում է՝***

1. Տալ համաձայնություն Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Փարաքար համայնքի Փարաքար գյուղում Էդգար Վահանի Նիկողոսյանին սեփականության իրավունքով պատկանող 04-094-0104-0029 կադաստրային ծածկագրով՝ Հ.Աճառյան փողոց թիվ 6/1 հասցեում գտնվող բնակավայրի, բնակելի կառուցապատման 0.0685 հա հողամասին կից բնակավայրի, բնակելի կառուցապատման գործառնական նշանակության 0.00681 հա հողամաս ուղղակի վաճառքի միջոցով՝ ընդլայնման նպատակով օտարել՝ Էդգար Վահանի Նիկողոսյանին:

2.Վաճառքի գինը սահմանել մեկ քառակուսի մետրի համար 6834.3 ՀՀ դրամ՝ կադաստրային արժեքին համապատասխան:

3.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

Կողմ -11 Դեմ - 0 Ձեռնպահ -0

ԱՂԵԿՅԱՆ ՌՈՒԲԻԿ
ԱԽՏՈՅԱՆ ԴԱՎԻԹ
ԱՎԱԳՅԱՆ ԼԻԼԻԹ
ԳՅՈՒԼՆԱԶԱՐՅԱՆ ԼՅՈՒԴՎԻԳ
ԵՐԻՑՅԱՆ ԷՄԻՆ
ԻՍՊԻՐՅԱՆ ՄԱՐԻԱՄ
ԽԱՉԱՏՐՅԱՆ ԳԵՎՈՐԳ
ՄԻՆԱՍՅԱՆ ԴԱՎԻԹ
ՄԿՐՏՉՅԱՆ ԿԱՐԵՆ
ՍԱՐԴԱՐՅԱՆ ՆԵԿՏԱՐ
ՎԱՐԴԱՆՅԱՆ ԱՐԱՔՍՅԱ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԴԱՎԻԹ ՄԻՆԱՍՅԱՆ

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՓԱՐԱՔԱՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Փարաքար համայնք
ՀՀ, Արմավիրի մարզ, գ. Փարաքար, 0231 6-00-42, 060-53-00-42 paraqar.armavir@mta.gov.am

### Ո Ր Ո Շ ՈՒ Մ
19 ՄԱՅԻՍԻ 2022 թվականի N 60 –Ա

### ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՓԱՐԱՔԱՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՀԵՐԹԱԿԱՆ ՆԻՍՏԻ ՕՐՎԱ ՍԱՀՄԱՆՈՒՄ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 62-րդ հոդվածի 2-րդ մասով, ***Փարաքարի համայնքի ավագանին որոշում է.***

1. Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Փարաքար համայնքի ավագանու 2022 թվականի հաջորդ նիստի գումարման օր սահմանել 2022 թվականի հունիսի 15-ը:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

Կողմ -11 Դեմ - 0 Ձեռնպահ -0

ԱՂԵԿՅԱՆ ՌՈՒԲԻԿ
ԱԽՏՈՅԱՆ ԴԱՎԻԹ
ԱՎԱԳՅԱՆ ԼԻԼԻԹ
ԳՅՈՒԼՆԱԶԱՐՅԱՆ ԼՅՈՒԴՎԻԳ
ԵՐԻՑՅԱՆ ԷՄԻՆ
ԻՍՊԻՐՅԱՆ ՄԱՐԻԱՄ
ԽԱՉԱՏՐՅԱՆ ԳԵՎՈՐԳ
ՄԻՆԱՍՅԱՆ ԴԱՎԻԹ
ՄԿՐՏՉՅԱՆ ԿԱՐԵՆ
ՍԱՐԴԱՐՅԱՆ ՆԵԿՏԱՐ
ՎԱՐԴԱՆՅԱՆ ԱՐԱՔՍՅԱ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ԴԱՎԻԹ ՄԻՆԱՍՅԱՆ